35. ԽԵԼԱՅԻ ԿՆԻԿ

Վախտով շախ ուր մարթեր, վազիրներ կառնի, կէրթա՜ ֆռալ: Խորոտ կնգյա՜ մը ռաստ կուգյա՜: Շախու աչք կինի էտա կնգյան:

Ուր մարթերաց կասի. - Կնա՜ցեքյ էսա կնգյան իտն, էնոր տուն սովրեքյ որտեղն ի, էկեքյ զիկ ասեքյ:

Կէրթա՜ն կնգյան իտիվիս: Կնգյա՜ տուն կկիտնան, կտա՜ռնան կուգյան, շախուն կասեն. - Կիցանքյ որտեղն ի:

Շախ կասի. - Կնա՜ցեքյ մտեքյ կնգյան տուն, աչկեքյ ախքյատ ի, թե զանգյին ի:

Մարթեր կէրթա՜ն կնգյան տուն, կպա՜նան կմտնեն տուն, կտիսնան, որ շատ ախքյատ ի, զա չկա, մեյ փոստ ի թալի վեր թորվան, նստեր ի:

Կուգյան շախուն կասեն. - Շատ ախքյատ ի, մեկ փոստ կեր, թալիր էր թորվան, նստիր էր:

Շախ կասի. - Դե կնա՜ցեքյ, այչի տարեքյ էնոր տուն, յար-յաթաղ տարեքյ էնոր տուն, արաղ-գյինի, ինչ-որ լազըմ ի՝ տարեքյ էնոնց տուն, լյեքյ: Թամխեքյ, որ իրիկուն կէրթա՜մ էնոնց տուն:

Վազիրներ շախու ասածներ կանեն:

Շախ՝ չյուր իրիկուն կֆռա, իրիկուն կէրթա կնգյան տուն:

Կնիյ պամ չկանա ասե, չը՝ կիտի ինչ բա՜ս ի, կա՜բուլ. կանի:

Շախ խաց-մաց կուտի, կնգյան արաղ լյել կուտա, ինքյ կխմի:

Կմնա, քիչըմ սորա, կտիսնա, որ պեռպիկ, քյոլոգով չըփլախ մարթըմ կուգյա կկայնի:

Շախ կնգյան կխառցուցի. - Էսա վո՞վ ի:

Կնիյ կասի. - Իմ իրիկն ի:

- Դե, - կասի, - որ ըսկուն ի, տյու արե նստի խեստ իմ կշտին, թող էն լյի, մենքյ խմենքյ:

Կնիյ կէրթա, կնստի, խե շախու կըշտին: Ըստըրիս իրիյ կլյի, շախ էնա՜ն կնիյ մեյ տրրա՜ կխմին, չյուր շախու քյեֆ թամամ կէլնի:

Ըստըրիս շախ կվերուցի կնգյան կասի. - Էլի՛ տեղ իսկի, էսա կիշերս ես տու մեյտեղ պիտի պառկենքյ:

Էն կախ նոր կնիյ կիմնա որ շախու միտք քյանքյ ի, կնիկ կվերուցի շախին կասի. - Ինչ որ խոտի՝ աղ դարման ի, աղ որ խոտի՝ ի՞նչ դարման ի, աստված էսա խոտ տար, թալ մեչ գյետին՝ թող տանի:

Շախ քիչըմ կայեղնա, խելքյ կուգյա գյլեհխ, կասի. - Կնինկ, ի՞նչ ասիր, մեկ էլ ասա՛:

Կնիյ կասի. - Շախ, ինչ որ խոտի՝ աղ դարման ի, աղ որ խոտի՝ ի՞նչ դարման ի, աստված էսա խոտ տա՛ր թալ մեչ գյետին, թող տանի:

Շախ կնգյան հաղ խաբրին կաբուլ կանի, էլ կնգյան չտեպնե, կթոնի կէրթա: